

3.2.2. Մեքենաշինություն

(1) Դիտագնված ձեռնարկությունների ընդհանրագիրը

1) Հետազոտական քիմը կատարեց 12 րեկամու ձեռնարկությունների ճարագնում, նպատակ ունենալով ենթահասավածից բնարել մեկ մոլեկային ձեռնարկություն, որը կհամաարտատախաներ ենթարամին 3.1.1.(1)-ում րերված չափանիչներին: Դեարագնման արդյունքները տեղեկությունների հիմնական բազա են կազմում մոլեկային ձեռնարկության կառավարումը բարելավելու համաարարիակ ծրագրի և ենթահասավածի զարգացման պլանի համար:

Աղյուսակ 3.2.2.1 Մեքենաշինական արդյունաբերության գնված ձեռնարկությունների ցանկը

| | Ձեռնարկության անվանումը | Վայրը | Բիզնեսի ոլորտը |
|----|--|------------|--|
| 1 | Մշակ | Երևան | CNC(ԹԾԿ) համակարգեր |
| 2 | Էլեկտրոն | Վանաձոր | Մպատող ապրանքներ |
| 3 | Ավտոգնման | Վանաձոր | Ձողող և կտրող սարքեր |
| 4 | Չափիչ #1(*1) | Արովյան | Ռադիո-էլեկտրոնային չափիչ սարքեր |
| 5 | Չափիչ #2(*1) | Արովյան | Ռադիո-էլեկտրոնային չափիչ սարքեր |
| 6 | Չարենցավանի գործիքաշինական | Չարենցավան | Մեքենաշին. գործիքներ |
| 7 | Չարենցավանի հաստոցաշինական | Չարենցավան | Մետաղափառ հաստոց |
| 8 | Երֆրեզ | Երևան | Աղացող մեքենաներ |
| 9 | Հրազդանմաշ | Հրազդան | Գեներատոր, սլոնպ, մինի-տրակտոր ևն |
| 10 | Երևանի տեխնո-սարքավորման գործարան (*2) | Երևան | Պողպատե նստարան, կախովի առաստաղ, փակոցափեղկ ևն |
| 11 | Տեխնոդիմաբա (*2) | Երևան | Պողպատե/ալյումինե ապրանքներ |
| 12 | Ալկոն (*2) | Երևան | Ալյումինե դոներ, պատուհաններ, ցուցափեղկեր |


(*1) Այս ձեռնարկությունները գրանցված են էլեկտրոնիկայի և ռադիոէլեկտրոնիկայի ենթաճյուղում, բայց այցելվել ու վերլուծվել են մեքենաշինության խմբի կողմից:

(*2) Երեք ձեռնարկությունները «Հայ Թիմ»-ի՝ մայր ընկերության դուստր ձեռնարկություններն են:

Հետազոտական քիմը կիրառեց նաև աղյուսակ 3.2.2.2-ում նշված 3 լրացուցիչ չափանիշները, էլեմելով մեքենաշինական արդյունաբերության արդի իրավիճակից:

Աղյուսակ 3.2.2.2 Սողելային ձեռնարկության ընտրության դասակարգված չափանիշները

| | |
|--|--|
| 1. Կառավարման իրավիճակը | |
| Ա. Հիմնականում մույն տեսակի քիզնես, ինչ որ մախկինում | |
| Գործուն | Չախտողված |
| Ավտոզեմմաշ Երբքեգ | Չարեմցավանի հաստոցաշինական Չարեմցավանի գործիքաշինական |
| Բ. Սկեսել եմ նոր քիզնես | |
| Գործուն | Ոչ գործուն |
| Հայ Թիմ Մշակ | Էլեկտրոն Հրազդանմաշ Չափիչ #1 և #2 |
| Գ. Ուզում եմ վաճառել ձեռնարկությունը | |
| 2. Քննարկվող գարգացման ուղղությունը | |
| Հստակ | Ոչ հստակ |
| Հայ Թիմ Մշակ Ավտոզեմմաշ | Երբքեգ |
| Չի որոշված | |
| Էլեկտրոն Հրազդանմաշ | Չարեմցավանի հաստոցաշինական Չարեմցավանի գործիքաշինական |
| 3. Տեխնոլոգիական մակարդակը | |
| Ա. Տեխնոլոգիայի մոր տեսակ մեքենաշինության տվյալ բնագավառում | |
| Յոտրագված | |
| Հայ Թիմ, Մշակ | |
| Բ. Անցյալից ժառանգած սեփական տեխնոլոգիա | |
| Բարիլավում եմ | Հետ եմ մնում |
| Ավտոզեմմաշ Երբքեգ Հրազդանմաշ | Էլեկտրոն Չարեմցավանի հաստոցաշինական Չարեմցավանի գործիքաշինական |



Նկ. 3.2.2.1 Գնահատման արդյունքները

- ա) Կառավարման իրավիճակը - արդյո՞ք շարունակել գործունեության նախկին տեսակը, քե՞ն նոր բիզնես սկսել:
- բ) Ջարգացման ուղիությունը - հասա՞նք, քե՞ն ոչ որոշակի:
- գ) Տեխնոլոգիական մակարդակը -- մեքենաշինության կիրառման նո՞ր տեսակի ուղիա, քե՞ն անցյալից ժառանգած սեփական տեխնոլոգիան:

2) Մոդելային ձեռնարկությունը՝ «Հայ Թիմ» խումբը

«Հայ Թիմ» խումբը՝ մոդելային ձեռնարկությունը զբաղված է սրճարատ կառույցի (օրինակ՝ օդանավակայանի/գրոսայգու նստավայրերի), սլոտափեղկերի, տաղավարների, այլոմիեն պրոֆիլների և այլնի արտադրությամբ, այսինքն՝ բիզնեսի հիմնական ուղիությունը մեքենաշինությունից փոխել է շինարարական աշխատանքներին առնչվող մետաղամշակման: Ընկերությունը 1997թ. ներդրումներ կատարեց իր նոր արտադրական շինությունների ու սարքավորման մեջ և 1998-ին սկսեց փաստացի արտադրական գործունեությունը: «Հայ Թիմ»-ը նախատեսված է հասնել արտադրական մշակույթի հնարավորինս բարձր մակարդակի և արտահայտեց իր սրատրաստակամությունը՝ ընդունելու JICA-ի հետազոտական քիմի աջակցությունը:

3) Այլ ձեռնարկությունները

Այլ ձեռնարկությունների իրավիճակը հետևյալն էր:

- «Մշակ» (մասնավոր ընկերություն, 90 աշխատող, գնահատման ցուցանիշը՝ 70)

Չնայած Ռոսաստանի ճգնաժամին և Իրանում առկա տնտեսական դժվարություններին, «Մշակ»-ը 1998թ. հատկապես լավ գործունեություն է իրականացրել, հաջողությամբ իրացնելով իր ինքնատիպ ապրանքները (CNC և շարժման հսկման համակարգեր): Այստեղ մեծ է կառավարիչների դերը, որոնք աչքի են ընկնում բացառիկ ունակություններով և ունեն միջազգային գործարար կապեր, որոնց միջոցով էլ հաջողում են իրականացնել ինչպես շուկայավարումն ու վաճառքը, այնպես էլ նյութերի ու բաղադրամասերի ձեռքբերումը: Ընկերության վաճառքի ծավալը հասավ 410 միլիոն դրամի (812 հազար ԱՄՆ դոլարի), ինչը 2,7 անգամ ավելի էր, քան 1997 թվականին: «Մշակ»-ը գիտի՝ ինչպես ինքնուրույն գործել ու զարգանալ այնպիսի երկրների շուկաներում, ինչպիսիք են Իրանը, Ռուսաստանը և Ուկրաինան, ինչպես նաև՝ ներքին շուկայում: Ընկերության բույլ կողմն այն է, որ չունի սեփական արտադրական հնարավորություններ, իսկ գրավի անբավարարությունը բույլ չի տալիս բիզնեսի ընդլայնմանն ուղղված կապիտալ ներդրումների համար փոխ առնել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ:

- «Ավտոգենմաշ» (պետության մասնաբաժինը՝ 73,8%, գնահատման ցուցանիշը՝ 60)

Ընկերության զարգացումը հենվում է զոդման հարմարանքների իր եզակի տեխնոլոգիայի վրա: Բանի որ Ռուսաստանի հանդիսանում է «Ավտոգենմաշ»-ի հիմնական շուկաներից մեկը, ուստի և վերջինս մեծապես տուժեց այնտեղ բռնկված տնտեսական ճգնաժամի ազդեցությունից: Վաճառքի ծավալը 1998թ. նվազեց 55%-ով և կազմեց 285 միլիոն դրամ (565 հազար ԱՄՆ դոլար): Ընկերությունը պետք է անհապաղ կենտրոնանա Միջին Արևելքի շուկաների վրա:

- «Հրազդանմաշ» (պետության մասնաբաժինը՝ 80%, գնահատման ցուցանիշը՝ 48)

Ընկերությունն ուսումնասիրել է նոր քիմիկատի հնարավորությունը՝ սկսած շարժական գեներատորից և վերջացրած միջի տրակտորով, ընդ որում այս վերջին դեպքում ներառված է օտարերկրյա ֆիրմայի (ներգրավված է մի ճապոնական ֆիրմա) հետ համատեղ աշխատելու գործոնը: Սակայն, սա այսօր չկա որևէ արդյունք: 2300 գրանցված աշխատող ունեցող սույն ընկերությունը 1998թ. վաճառել է միայն 2,7 միլիոն դրամի (5352 ԱՄՆ դոլարի) արտադրանք: Ջեռուցման համակարգի խանգարման պատճառով ընկերության գործունեությունը 1998թ. սեպտեմբերի 1-ից 7 ամսով դադարեցվել էր: Սա զարգացման ուղղության անորոշության մի կողմնակի վկայություն է: «Էլեկտրոն»-ը (պետության մասնաբաժինը՝ 49%) գտնվում է համանման իրավիճակում: Նույնը վերաբերում է Չարենցավանի գործիքաշինական գործարանին (1998թ. վաճառքը՝ 77 միլիոն դրամ (153 հազար ԱՄՆ դոլար), աշխատողների քիվը՝ 660):

Պետական ընկերություն հանդիսացող Չարենցավանի հաստոցաշինական գործարանը (1998թ. վաճառքը՝ 194 միլիոն դրամ (385 հազար ԱՄՆ դոլար), աշխատողների քիվը՝ 1099) 1998-ի սեպտեմբերին սնանկ դարձավ: Գլխավոր պարտատերերն են բյուջետային հանձնախումբը և պետական ծառայողների կենսաբոլորակային հիմնադրամը: Թեպետ ընկերության կառավարիչները քննարկում են գոյատևման պլանը, առ այսօր որևէ դրական արդյունք ձեռք չի բերվել:

«Հրազդանմաշ»-ը, «Էլեկտրոն»-ը, Չարենցավանի հաստոցաշինական և գործիքաշինական ձեռնարկությունները սերտորեն կապված են տարածքային համայնքների հետ, և այս ընկերությունների վերականգնման հարցն առնչվում է տարածքային զարգացման խնդիրներին:

4) Ընդհանուր խնդիրները

ա) Մեքենաշինական արդյունաբերությունը հազիվ քե կարողանա վերականգնել իր նախկին դիրքերը:

- Ըմբռնումն այն է, որ մեքենաշինական արդյունաբերությունը, հատկապես ծանր մեքենաշինությունը, զանվում է ամբողջովին լճացած վիճակում՝ սլայմանավորված այնպիսի պատճառներով, ինչպիսիք են շուկայի կորուստը, հնացած տեխնոլոգիան և մաշված սարքավորումն ու շինությունները: Գրեթե ամենար է, որ ճյուղը, մեքենաշինության նեղ իմաստով, կարողանա վերադառնալ իր նախկին կարգավիճակին:

- ԱՊՀ տարածաշրջանում սուկար է մրցունակ գներով քերև հաստոցների սահմանափակ պահանջարկ, բայց իրատեսական չի լինի սկնկալել, որ հայկական արտադրողներն ի վիճակի կլինեն զարգանալ շուկայի ընթացիկ պայմաններում, երբ պահանջվում են արագ տեխնոլոգիական նորամուծումներ, և հավազդել համաշխարհային ամուստրյան գորալացման միջոցառումներին:

բ) Ի հետևանք անցած տաս տարիների անգործության, ձեռնարկությունները տեխնոլոգիապես հետ են մնացել:

Մեքենաշինական ենթահատվածի սարքավորումը, շենքերն ու շինությունները և աշխատողների հմտությունները հնացել են՝ սլայմանավորված անցած 10 տարիների անգործությամբ: Հասկանչական է, որ սարքավորման մեծ մասը շահագործման մեջ է մտել 15-ից 30 տարի ստաջ: Սա որսլես պատճառ է ունեցել մի սոցիալական համակարգից մյուսին անցումը և պետք է ընդունվի պարզ ու բացահայտ կեցվածքով: Կարևոր է, նախապես ընդունելով այս վիաստը, խոսել այն մասին, քե ինչպես փակել գոյացած բացը:

գ) Փոխադրումների հիմնահարցը

Փոխադրումների հիմնահարցը (ներմուծման և արտահամման ստումով) չի կարող լուծվել սոսկ ձեռնարկությունների ջանքերով: Տվյալ հիմնահարցը հատկապես լուրջ է մեքենաշինության համար՝ համեմատած այլ ճյուղերի հետ, քանի որ նյութերն ու ապրանքները սովորաբար մեծածավալ են և ծանր:

դ) Ներքին միակցված մշակման ամարդյունավետ համակարգ

ՆԽՄ-ի ժամանակաշրջանի արտադրական բաղաբականության հետևանքով ձեռնարկություններին անհրաժեշտ էր դառնում ունենալ ներքին միակցված մշակման համակարգ՝ սկսած հումքի նախապատրաստումից և վերջացրած հավաքման փուլով: Այս համակարգը ծայրաստիճան ամարդյունավետ է ճկուն արտադրություն իրականացնելու համար, հատկապես ինչ վերաբերում է ՓՄՁ-ի մակարդակով գործելուն:

ե) Մեքենամշակման տեխնոլոգիայի ուժեղ ազդեցությունը բոլոր արդյունաբերական ապրանքների վրա

Մեքենամշակման տեխնոլոգիան արմատական նշանակություն ունի բոլոր ճյուղերի

համար՝ այն առումով, որ վճռական ազդեցության է գործում սպրանքների կատարողականի, որակի և արտադրամասի վրա: Ե՛վ կառավարության, և՛ մասնավոր հատվածի համար տվյալ ենթահատվածում առկա դժվարությունների հաղթահարումը հույժ կարևոր խնդիր է համդիսանում: Ի՛նչպես արդյունք ձեռնարկությունների դիտագնման, հետազոտական քիմր խորհուրդ է տալիս կառավարությանը միջոցներ ձեռք առնել խթանելու այս ոլորտում նոր տեխնոլոգիաների հետազոտումն ու մշակումը, ինչն ի վերջո կրերի մասնավոր հատվածի կատարողականի զգալի բարելավմանը:

(2) Փ/Ա մոդելային ձեռնարկությանը

«Հայ Թիմ»-ին փորձագիտական աջակցությունը, ելնելով դիտագնման արդյունքներից, րենոված էր ավելի շատ կառավարման հմտությունների, քան քն ճարտարագիտական տեխնոլոգիայի կատարելագործման վրա: Կառավարումը բարելավելու համապարփակ ծրագիր ձևավորելու նպատակով իրականացվեց ավելի մանրամասն դիտագնում՝ հետևյալ քայլերի կիրառմամբ:

«Հայ Թիմ»-ին Փ/Ա-ի քայլերը

1. Լսումներ կառավարիչների և աշխատակազմի հետ
2. SWOT (ՈՒԹՀՎ) վերլուծություն
3. Ապագայի մտապատկերի մշակում
4. Ձեռնարկության պատասխանատվության ընկալում
5. Կառավարման նշանակետերի սահմանում
6. Գործողությունների ծրագրերի ձևավորում
7. Նպատակային ցուցանիշների սահմանում

1) Լսումներ կառավարիչների և աշխատակազմի հետ

Հետազոտական քիմն ինտենսիվ լսումներ անցկացրեց կառավարիչների և վաճառքի, հաշվապահության, արտադրության, ճարտարագիտության, կադրերի և տեղեկատվական համակարգի բաժինների բոլոր հաստիքային աշխատողների հետ, նպատակ ունենալով ներկայել ձեռնարկության կառավարման վիճակը:

2) Ուժեղ կողմերի, թույլ կողմերի, հնարավորությունների և վտանգների (SWOT) վերլուծությունը

Գոյություն ունի ձեռնարկության կառավարման միջավայրի երկու տեսակ, այն է՝ արտաքին միջավայր, որը ներառում է ձեռնարկության զորմունության հնարավորությունները և դիմակայող վտանգները, և ներքին միջավայր՝ ձեռնարկության կարողունակության ուժեղ կողմերը և թույլ կողմերը: Առանձին ձեռնարկությունը չի կարող ինքնուրույն վերահսկել արտաքին միջավայրը և սխալ է հարմարվի արտաքին փոփոխություններին: Արտաքին միջավայրի փոփոխությանը հարմարվելու համար պահանջվում է ունենալ կառավարման ուսումնասիրության բարձրագույն մակարդակ: Մյուս կողմից, ձեռնարկությունն ինքը կարող է կառավարել ներքին միջավայրը: SWOT վերլուծության ներքո ձեռնարկության ընթացիկ իրավիճակի բնութագրումը հնարավոր է դարձնում պատշաճ կերպով ձևավորել կառավարման կենսունակ ուսումնասիրություն: Այս տեսանկյունից, ուսումնասիրող կետերից առանձնացվել են հիմնական կետերը և ի մի բերվել նկար 3.2.2.2-ում՝ SWOT վերլուծության գծագրում (տե՛ս հաջորդ էջին):

3) Ապագայի մտապատկերի մշակումը


Ակնկալվող շուկաների և բիզնեսի տիրույթի առումով ասլագայի մտապատկերը ցույց է տրվում նկար 3.2.2.3-ում (տե՛ս հաջորդ էջին):

4) Ձեռնարկության պատասխանատվության ընկալումը


Հետազոտական քիմն ընդգծեց այն կարևորությունը, որ ունի կառավարիչների կողմից ձեռնարկության պատասխանատվության ընկալումը: Սա ներառում է.

- (1) բաժնետերերի, աշխատողների, գնորդների, մատակարարների և այլոց միջև ձեռնարկության ընդհանուր շահույթի պատշաճ բաշխման ապահովումը.
- (2) ձեռնարկության՝ որպես կորպորատիվ քաղաքացու ունեցած սոցիալական պատասխանատվության գիտակցումը.
- (3) հասարակության զարգացման գործում ձեռնարկության դրական ներդրանքի ապահովումը:

«Հայ Թիմ»-ի կառավարիչները համամիտ էին ձեռնարկության պատասխանատվության վերոնշյալ կետերի հետ:




Նկար 3.2.2.2 SWOT վերլուծության գծագիրը



Նկ. 3.2.2.3 Ապագայի մտապատկերը

5) Կառավարման նշանակետերի սահմանումը

Վերն որվագրված պատասխանատվության ձևնարկության սպառազայի մտադրություններն իրագործելու նպատակով սահմանվեցին կառավարման նշանակետերը, ինչպես ցույց է տրվում նկար 3.2.2.4-ում:



Նկ. 3.2.2.4 Կառավարման նշանակետ

6) Գործողության ծրագրերի ձևավորումը


Հետազոտական քիմի բացատրեց և պարզաբանեց գործողությունների համապատասխան ծրագրերի կարևորությունը կառավարման նշանակետերին հասնելու համար: «Հայ Թիմ»-ի կառավարիչների կողմից մշակման և կատարման ենթակա գործողությունների ծրագրերը պետք է ներառեն հետևյալը. (1) կառավարման կանոնների սահմանում ու կազմակերպական բարեփոխումների անցկացում և կառավարմանը սատարող համակարգի բարելավում, (2) շուկայավարման և վաճառքի ստաջմոմ, և (3) արտադրողականության բարձրացում և նյութերի ծախսի կրճատում:

Աղյուսակ 3.2.2.3 Կառավարման հնտությունների բարելավման գործողությունների ծրագիրը

1. Կառավարման կանոնների ստեղծումը և կազմակերպական բարելավման իրականացում


1) Կառավարման բյուրաշրջանի պարբերակումը

- =>ՊԼԱՆ (P). Երկարաժամկետ մտազրույցներ => Միջնաժամկետ պլան => Կարճաժամկետ պլան => Ամսական պլան
- =>ԱՆԵԼ (D). Պլանի կատարում
- =>ՄՏՈՒԳԵԼ (C). Պլանի և փաստի տարբերության բնում
- =>ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ (A). Տարբերության միևնույնացում



2) Կազմակերպական բարելավումը

- =>Անճնական հրամանակարգից դեպի համակարգված կազմակերպություն
- =>Անճն մի բաժնի և բաժանմունքի դերի հստակ սահմանում
- =>Կազմակերպությունում անհատական կարգավիճակի ու դիրքի որոշարկում



2. Կառավարման աջակցման տրամաբանական և արագագործ համակարգ


1) Հաշվապահությունը

=>Տրամաբանական

| | Ֆինանս. հաշվապահություն | Կառավ. հաշվապահություն |
|-------------|-------------------------|------------------------|
| Նպատակ | Բաժնետիր/Արտ. կոտ. համ. | Կոտ. որոշման համար |
| Բնույթը | Ֆին. վիճակ/արդյունքները | Կառավարման ավյակներ |
| Կանոնը | Հաշվապ. ստանդարտ | Ներքին կանոն |
| Ժնկչրջանը | Անցյալը | Անցյալն ու ապագան |
| Առարկան | Փաստեր | Փաստերը և վարկածը |
| ճշտությունը | Հստակ | Կանխատես./Գնահատում |

2) Տեղեկատվական համակարգը (համակարգիչներ)

- =>Արագագործ
- =>Հետևողականություն



Աղյուսակ 3.2.2.4 Շուկայավարձան և վաճառքի գործողությունների ծրագիրը

1. **Վաճառքի բարելավում.**
 - 1) **Վաճառքի բաժնի ստեղծում**
 - =>Պատասխանատու և վաճառքի պլանի մշակման համար
 - =>Վաճառքի աշխատակազմի ձևավորում
 - 2) **Վաճառքի հստակ պլան**
 - =>Ըստ շուկայի, ապրանքի և ժամանակահատվածի
 - =>Բանակալային և գումարալային արտահայտությամբ
2. **Շուկայավարձան գործունեության բարելավում**
 - 1) **Տրամաբանական մասեցում. “T և 4P”**
 - =>T - նշանակետ. ըստ սպրանքի նշանակեաային գնորդի որոշարկում
 - =>P - սպրանք. հստակ հայեցակարգ (գնորդի օգուտը, տարբերացում մրցակիցներից)
 - =>P - վայր (բաշխման ուղի). ուղղակի կամ միջնորդավորված
 - =>P - խրանում. խրանման պլան ըստ սպրանքի և շուկայի
 - =>P - զին. ըսկ հավատարակշակած մրցունակ և շահորարեր զին
 - 2) **Ուսգմավարական մասեցում**
 - =>Մտտավարչական որոշմամբ. գովազդի, գնային զեղչի և այլնի հստակ խրանում
 - =>Ցուցահանդես
 - 3) **Շուկայի հեռասգում**
 - =>(1) Ենրավարկում
 - (2) Շուկայի ուսումնասիրում. տվյալների հավարագրում, և
 - (3) Ենրավարկածի խելության հավաստում

Աղյուսակ 3.2.2.5 Արտադրողականության բարձրացման գործողությունների ծրագիրը

| | |
|--|--|
| 1. Արտադրութ. ծախսի նվազեցում | |
| 1) Ծախսի կառ-ման համակարգ | |
| ⇒ Ծախսի աղյուսակի ստանդարտացում | |
| ⇒ Ծախսի ստանդարտ / ծխավ. նյութեր, ուշի-ք, սյւ ուղղ. ծախսեր | |
| ⇒ Ծախսի ստանդարտն ըստ սպրանքների | |
| 2) Հավ-կողմով և արդյունավետ աղյուսակ սլլան | |
| ⇒ Արտ-քյան ժննկացույցը համաձայն վաճառքի սլլանի | |
| ⇒ Արտ. 4 խմամկետը | |
| ⇒ Գործառ. քանորոշմ ըստ գործ-նի, տարւ-մասի և գործընթացի | |
| 2. Նյութ. ծախսի կրճատում | |
| 1) Նյութերի բաժնի ստեղծում | |
| ⇒ Ջրաղբվում է բոլոր նյութերի ձեռքբերմամբ, պաշարափորձամբ, սպահովմամբ և գույքագրմամբ | |
| ⇒ Գնման և գույքագրման ծախսի կրճատման սլլան | |
| 2) Ուղղ. ծախսի կրճատ. գործ-ն | |
| ⇒ Բանակցմամբ ստղինով գնումներ: Պահանջվում է որոշ տրամսք. մոտեցում | |
| ⇒ 2-րդ աղբյուր | |
| ⇒ Նախագծի փոփոխում – սլլակաս նյութեր, նյութի փոխում, սլլակաս ծախս, հեշտ հստկարում | |

7) Նպատակային ցուցանիշների սահմանումը

Ելնելով 1998թ. փաստացի ցուցանիշներից, վաճառքի կանխատեսումների և արտադրության ծախսի կառուցվածքի մասին կառավարիչների հայտնած տեղեկություններից, հետազոտական քիմը ցուցադրեց ընկերության հնգամյա գործարար սլլանի նմանակման մի տիպական օրինակ: Նմանակման՝ սիմուլյացիայի հիմնական կետերը բերված են աղյուսակում:

Աղյուսակ 3.2.2.6 Նմանակման հիմնակետերը (մլն դրամ)


| | 1999 | 2003 | 2003/1999 |
|---|-------|-------|----------------|
| Վաճառքը | 550 | 1237 | 225% |
| Ջուտ շահույթը (հարկից հետո) | -22 | 348 | |
| Շահույթի քանորոշը | -4% | 28% | |
| Ծախսածածկման (գրոյական շահույթի) կետը | 496,2 | 301,5 | |
| Նոր կապիտալ ներդրում | 400 | 0 | |
| 3-ամյա վարկ | 300 | 0 | Մարումը 2001թ. |
| Աշխատող | 177 | 255 | 144% |

(Գիտողություն) *Լարկի գումարը ներառում է 44 մլն դրամի նյութերի նախնական ձեռքբերումը:

Աղյուսակ 3.2.2.7 «Հայ Թիմ» նպատակային վաճառքի և շահույթի նմանակումը


| | միլիոն դրամ | | | | | |
|--|--------------------|----------------------|----------------------|----------------------|----------------------|----------------------|
| | 1998 հունվ-դեկտ | 1999 հունվ-դեկտ | 2000 հունվ-դեկտ | 2001 հունվ-դեկտ | 2002 հունվ-դեկտ | 2003 հունվ-դեկտ |
| Զուտ վաճառքը | 216.9 | 550.2 | 938.0 | 1037.2 | 1156.8 | 1237.4 |
| Արտադրության ծախսեր ուղղ. օգտ. նյութեր | 246.3 123.0 | 500.7 288.4 | 703.2 445.3 | 721.5 446.6 | 741.9 455.9 | 713.9 452.4 |
| Այլ նյութեր Բանվորների աշխ- վարծ | 21.4 35.1 | 43.3 47.8 | 66.8 64.4 | 67.0 78.5 | 68.4 86.4 | 67.9 93.7 |
| Արտ. անուղղ. ծախս ՀԱՄ, ծարտարագիտ. Ամորտիզացիա | 8.6 8.1 50.1 | 11.9 10.6 98.7 | 14.7 13.3 98.7 | 15.6 14.9 98.7 | 16.2 16.3 98.7 | 16.9 17.7 65.3 |
| Համախառն շահույթ | -29.4 | 49.5 | 234.8 | 315.9 | 414.9 | 523.5 |
| Գործառնակ. ծախսեր | 21.1 | 32.9 | 42.5 | 47.6 | 52.4 | 56.7 |
| Վաճառքից շահույթ | -50.5 | 16.6 | 192.3 | 268.3 | 362.5 | 466.8 |
| Ոչ գործառն. ծախս.- զուտ | 1.5 | 39.0 | 180.4 | 180.4 | 1.5 | 1.5 |
| Հահույթախարկ | 0.0 | 0.0 | 7.3 | 25.1 | 92.2 | 117.0 |
| Զուտ շահույթ | -52.0 | -22.4 | 4.6 | 62.8 | 268.8 | 348.3 |
| Փոփոխական ծախսեր | 180.5 | 382.2 | 581.2 | 597.3 | 616.4 | 620.2 |
| Հաստատագրվ. ծախսեր | 86.9 | 151.5 | 164.5 | 171.6 | 177.9 | 150.4 |
| Եզրային շահույթ | 36.4 | 168.0 | 356.8 | 459.9 | 540.4 | 617.2 |
| Ծախսածաժման կետը | 517.8 | 496.2 | 432.5 | 404.6 | 380.8 | 301.5 |

Դիտողություն. 1998-ի թվերը փաստացի է




Նկ. 3.2.2.5 Ամանակման սխեման

| | 1998 | 1999 | 2000 | 2001 | 2002 | 2003 |
|------------------|-------|-------|-------|--------|--------|--------|
| YFTE Sales | 55.8 | 63.2 | 93.0 | 130.2 | 148.8 | 167.4 |
| ALCON Sales | 161.1 | 487.0 | 845.0 | 907.0 | 1008.0 | 1070.0 |
| Growth ratio, YF | 100% | 113% | 147% | 140% | 114% | 113% |
| Growth ratio, AL | 100% | 302% | 174% | 107% | 111% | 106% |
| Sales amount | 216.9 | 550.2 | 938.0 | 1037.2 | 1156.8 | 1237.4 |



| | 1998 | 1999 | 2000 | 2001 | 2002 | 2003 |
|------------------|------|------|------|------|------|------|
| YF Sales Profit | -31 | -22 | -17 | -12 | -8 | -2 |
| AL Sales Profit | -20 | 39 | 209 | 281 | 370 | 469 |
| Total Net Profit | -52 | -22 | 5 | 63 | 269 | 348 |
| Profit ratio, YF | -55% | -35% | -18% | -10% | -5% | -1% |
| Profit ratio, AL | -12% | 8% | 25% | 31% | 37% | 44% |
| Profit ratio, NP | -24% | -4% | 0% | 6% | 23% | 28% |



Նկ. 3.2.2.6 «Դայ Թիմ». նպատակային վաճառքի և շահույթի նմանակումը

Նմանակումը ցույց է տալիս, որ 400 միլիոն դրամ նոր կապիտալ ներդրման դեպքում 2003թ. վաճառքը կկազմի 1237 միլիոն դրամ (225%՝ 1999-ի նկատմամբ), իսկ հարկերի վճարումից հետո գուտ շահույթը՝ 348 միլիոն (շահույթի բանորդը՝ 28%): Արտադրողականությունը, որ մեկ աշխատողին ընկնող վաճառքի ծավալն է, կբարձրանա և կհասնի 4,851 մլն դրամի (156%՝ 1999-ի համեմատ): Ծախսածածկման՝ գրոյական շահույթի կետը կբարելավվի և կիջնի 301,5 մլն դրամի (եզրային շահույթի բանորդը՝ 49,9%), համեմատած 1999թ. 496,2 մլն դրամի (եզրային շահույթի 33,6% բանորդի) հետ:

(3) Առաջարկություններ «Հայ Թիմ» ձեռնարկությանը

Կառավարման նշանակեալին հասնելու նպատակով, հետագոտական քիմը «Հայ Թիմ»-ի կառավարիչներին խորհուրդներ տվեց հետևյալ առանցքային կետերի սանցուրյամբ:

1) Ամսական կառավարման համակարգ.

- կառավարման բոլորաշրջանների գործընթացը.
- կառավարման համար պահանջվող զեկույցներն ու տվյալները.
- ամսական կառավարման հանդիպումներ անցկացնելու կանոնը:

2) Կազմակերպում.

- գծահաստիքային կազմակերպում:

3) Ծախքերի կառավարում.

- ծախքահաշվարկի նպատակը.
- ծախքերն ըստ ապրանքի –աշխատանքի ծախսահաշվարկի գործընթացը
 - արտադրության ծախսահաշվարկի գործընթացը
 - ստանդարտ ծախսահաշվարկի գործընթացը
 - ուղղակի ծախսահաշվարկի գործընթացը


4) Շուկայավարում և վաճառքներ.

- արդյունաբերական և սպառողական ապրանքների շուկայավարման տարբերացումը.
- արդյունաբերական ապրանքների վաճառքի առանցքային կետերը.
- շուկայաբաժնի նշանակությունը:

5) Տեղեկատվական համակարգ.

- տեղեկատվական համակարգի նպատակը.
- ռեալ ժամանակում կառավարումը – արագ և հետևողական տվյալներ.
- համակարգի զարգացումը –ընթացիկ համակարգ՝ PC-երի ցանց
 - փուլ 1. Ինտերնետ.
 - փուլ 2. Ինտերնետ.
 - փուլ 3. Էքստրանետ:


6) Գործողությունների ծրագրի ժամանակացույցը բերված է նկ. 3.2.2.9-ում:



Նկ. 3.2.2.7 Կառավարման բոլորաշրջանն ըստ ամսական կառավարման

| Ըկառավար. և հաշվապահ. | Շտկայ. և վաճ. ՀԱՄ, ճարտարագու. | Գնումներ, սրտադր. |
|--------------------------|--------------------------------|-----------------------------|
| Ոճեր ամսույ գեկույց | Վաճ. ընդի գեկույց | Երաշտադրարի գեկույց |
| Շահ. վնասի գեկույց | Վաճ. արդյնք. գեկ. | Վնաս և շահույթ կաճ. գեկույց |
| Հաշվեկշիռի ամիսի գեկույց | Վնասարի խթանման գեկույց | |
| Սնն. ինժեներ. գեկույց | | Մրտադր. լճնի. գեկույց |
| Փոխու. ըստ բաժնիճների | ՀԱՄ, ճարտարագ. գեկույց | Մրտույ. ծախսի գեկ. |
| Աշխատույ կառուցվ | | Ըստ արժանք. ծախսի գեկ. |
| Կառւ. սխեման | | Ապրանքապաշարի գեկ. |

Նկ. 3.2.2.8 Ամսական կառավարման հիմնական հաշվետվությունները



Նկ. 3.2.2.7 Կառավարման բոլորաշրջանն ըստ ամսական կառավարման

| Օլոնապար. և հաշվառում | Հաշիւ և վաճ. ՀԱՄ, ճարտարագիտ. | Գնումներ, պլանային |
|-------------------------|-------------------------------|----------------------------|
| Ընդհ. ամսակ. գնկայց | Վաճ. ընդհ. գնկայց | Նյութատեխնիկական գնկայց |
| Հատ. կենտրոնի գնկայց | Վաճ. տրայնը. գնկ. | Վնաս. և ծախսեր կաճ. գնկայց |
| Հաշիվների ամփոփ. գնկայց | Վաճարների իրականացում գնկայց | Արտադր. ընդհ. գնկայց |
| Մեծ. ինժեներ. գնկայց | ՀԱՄ, ճարտարագ. գնկայց | Արտադր. ծախսերի գնկ. |
| Մեխա. ըստ բաժինների | | Շին. տարրերի, ծախսերի գնկ. |
| Աշխատող. կատարել | | Ապրանքաբազային գնկ. |
| Կազմ. սինժան | | |

Նկ. 3.2.2.8 Ամսական կառավարման հիմնական հաշվառվածությունները

| Լծարկան | Գործողությունը | 1999 | | | 2000 | | |
|------------------------|---|---|---|---|---|--|-----|
| | | Հով. Փետ. Մար. Ապր. Մայ. Հուն. Հուլ. Օգոս. Սեպ. Հոկ. Դեկ. | Հով. Փետ. Մար. Ապր. Մայ. Հուն. Հուլ. Օգոս. Սեպ. Հոկ. Դեկ. | Հով. Փետ. Մար. Ապր. Մայ. Հուն. Հուլ. Օգոս. Սեպ. Հոկ. Դեկ. | Հով. Փետ. Մար. Ապր. Մայ. Հուն. Հուլ. Օգոս. Սեպ. Հոկ. Դեկ. | | |
| Գործարար պլան | Միջնաժամկետ նշանակված | | (1) | (2) | | | (3) |
| | Ընդհանուր | | | | | | |
| | Ըստ գործարարի | | | | | | |
| | Ըստ շաբաթի | | | | | | |
| Ան. կատարում | Գործարար պլանի | | | | | | |
| | Ան. կատարման | | | | | | |
| Կազմակերպում | Կազմակերպական բարեփոխումներ | | | | | | |
| | Արտ. հատվածի կառուցվածքը | | | | | | |
| Շուկայակալում և վաճառք | Միջնաժամկետ պլանը 1999թ. վաճառքի պլանը | | (4) | (5) | | | (3) |
| | Ընթաց. տարվա խթանման պլանը | | | | | | |
| | Ցանկումների բյուջեի պլանը | | | | | | |
| Արտադրություն | Արտադրության պլանը | | | | | | |
| | Արտադրության ժամանակացույցը | | (4) | (5) | | | (3) |
| | Արտադրող-ուրյան | | | | | | |
| | Ցանկերի կրճատման (ՏԿ) պլանը | | | | | | |
| ՀԱՄ և ճարտարագ. | Մշակումների պլանը | | (6) | (7) | | | (5) |
| | Ցանկումների բյուջեի պլանը | | | | | | |
| Ընդհ. կատարում | Աշխատակազմի պլանը 1999թ. Ցանկում. բյուջեի պլանը | | (6) | (7) | | | (5) |
| Հաշվապահություն | Կատարման հաշվապահությունը | | (6) | (7) | | | (5) |
| | Ցանկերի կառավար. համակարգը | | | | | | |
| | Ստանդարտ հաշվառման ստան. | | | | | | |
| | Նոր համակարգի կիրառումը | | | | | | |
| | Ինտերնետ | | | | | | |
| | Ինտերնետ | | | | | | |
| | Ցանկումների բյուջեի պլանը | | (6) | (7) | | | (5) |
| Լծարկան | Գործողությունը | | | | | | |

Դիտ.: (1) 1999-2003թթ. (2) Դիտարկված 2000թ. համար (3) Դիտարկված 2001թ. համար

Նվ. 3.2.2.9 Ժամանակացույցը

(4) Փ/Ա-ի ազդեցությունը «Հայ Թիմ»-ի վրա

1) Ի սրբյանք ձեռնարկությունների դիտազննման առիվ հետազոտական քիմի ցուցաբերած վարձագիտական սջակցության, կառավարիչների հետ միասին իրականացրած դիագնոստիկական ուսումնասիրության և JICA-ի սեմինարի, հետազոտական քիմի կողմից առաջարկվեցին կառավարման մի շարք եղանակներ և կատարվեցին համաարտասխան գործողություններ: Սա արվեց նույնիսկ հետազոտության սեղմ ժամանակահատվածի պայմաններում: Ձեռնարկությունների շատ կառավարիչներ, ներառյալ «Հայ Թիմ»-ը, ձգտում էին դրսևորում հասկանալ և օգտագործել կառավարման այդ մեթոդներն իրենց ներկա կամ ապագա գործունեության մեջ, այդ թվում՝ կապիտալ ներդրումների ֆինանսավորման նպատակով առևարային բանկերին դիմելու փաստաթղթերի պատրաստման գործում: Ձեռնարկությունների վրա Փ/Ա-ի ներգործության առավել նշանակալի կողմերը հետևյալն են.

- a) ձեռնարկությունների և դրանց գործունեության վերլուծման / գնահատման եղանակների և տեսակետների հետ ծանոթացում.
- b) հաշվապահության (հասկապես՝ կառավարման հաշվապահության)՝ որպես կառավարման գործիքի կարևորության ըմբռնում.
- c) համակարգչված տեղեկատվական ցանցի կարևորության գիտակցում:

2) Քանի որ «Հայ Թիմ»-ը հետազոտական քիմից խորությամբ սովորեց միջնաժամկետ գործարար սլանի ձևավորման վերլուծական եղանակը և տեխնիկան, ուստի ընկերությունը կարող գտնվեց ինքնուրույն պատրաստել Քրթքրյանի հիմնադրամին դիմելու փաստաթղթերի վարերը, բաղկացած ներդրումային նախագծի ուրվագրից, եկամտի հայտարարագրից և կանխիկի հոսքի հայտարարագրից (բոլորն էլ՝ անգլերեն լեզվով): Այս փաստաթղթերը ներկայացվել են Հիմնադրամի հավաստագրած 14 հայկական առևարային բանկերից մեկին, որն էլ դրանք ուղղելու է ԱՄՆ վերջնական որոշման:

3) Ինչ վերաբերում է հաշվապահության միջազգային ստանդարտներին (IAS), ապա հետազոտական քիմն օգնել է մողելային՝ «Հայ Թիմ» և «Սիրիուս» ձեռնարկություններին, որպեսզի վերջիններս դիմեն մասնակցելու «Հայկական ձեռնարկությունների հաշվապահության բարեփոխումը» սեմինարին, որն անց է կացվում SIBLEY INTERNATIONAL-ի կողմից՝ USAID-ի ծրագրի ներքո:

4) Համառոտ ախտանշական վերլուծություն է իրականացվել «Մշակ»-ում, «Ավտոգենմաչ»-ում և «Էլեկտրոն»-ում: Մյուսը այն ձեռնարկություններն են, որոնք ցանկություն են հայտնել քիմի կողմից ենթարկվելու նման դիագնոստիկ հետազոտության, այնինչ մյուս ձեռնարկությունները, ի հակառակ հետազոտական քիմի համառ ջանքերի, իրենց հեռու էին պահում: Հետազոտական քիմն առաջարկեց համաարտասխան

վերլուծական ծառայություններ, այդ բվում (1) տվյալ ընկերության գնահատման արդյունքները, (2) ընդհանուր մեկնարանությունների ձևաարկության գործունեության մասին և (3) հաստակ մեկնարանություններ, ինչպիսիք են SWOT վերլուծությունը, ամսական կառավարումը, կառավարման հաշվապահությունը, ծախսերի հաշվարկն ու շուկայավարումը և այլն: Այս երեք ձեռնարկությունների վերաբերյալ ձեռք բերվեցին հետևյալ տեղեկությունները:

- Մշակ – 1998թ. ընկերության գուտ վաճառքները կազմեցին 1997-ի մակարդակի 173% -ը և, 90 գրանցված աշխատող ունենալու սրբագույնի, կազմեցին 410 միլիոն դրամ (812000 ԱՄՆ դոլար): Թեպետ ընկերությունը վերջերս հաջողել է CNC-ի մատակարարման՝ 2,5 միլիոն դոլարի պայմանագիր կնքել Ստեյվիտամակի (Ռուսաստան) մեքենաշինական ձեռնարկության հետ վերջինիս ԳԱԶ սվառմորիկային գործարանի համար (Նիժնի Նովոգորոդ), այսուամենայնիվ, գործարքի կատարումը պահանջում է մոտ 600000 ԱՄՆ դոլարի կապիտալ ներդրումներ: Ընկերությունը մտադիր է սրահանջվող միջոցները ձեռք բերելու համար օգտվել Լինսի հիմնադրամի հնարավորություններից, սակայն նրա շենքերն ու շինությունները բավարար չեն որպես գրավ: Ընկերությունը նաև դիմել է Ձեռնարկությունների աջակցման հիմնադրամին (արտահանման խթանում՝ իրականացնողը ՋՀԳ-ն է), որի ֆինանսավորողը Համաշխարհային բանկն է: Հետագուտական թիմն օգնեց ընկերությանն արագացնելու այս գործընթացները:

- Ավտոգենմաշ – Ընկերության գուտ վաճառքը 1998թ. կազմել է 285 մլն դրամ (565000 դոլար), 1997-ի համեմատ կրճատվելով 54%-ով, ինչն ուղղակի արդյունք էր Ռուսաստանի հիմնական շուկայի ճգնաժամային իրավիճակի: Ձեռնարկությունն ունի 1066 գրանցված աշխատող (ըստ ընկերության, «ակտիվ» աշխատողների թիվը 645 է): Սևփականաշնորհման մրցույթը փակվել է 1998թ. դեկտեմբերի 16-ին: Համաձայն կառավարիչների ասածի, չնայած ներկայացվել է ընկերության գնման առաջարկ (ընկերության բաժնետոմսերի 74%-ի, որ կառավարության բաժինն է, ձեռքբերման գինը՝ գումարած ապագա ներդրումներ), կառավարությունն այն չի ընդունել: Կառավարիչները դեռ բանակցություններ են վարում կառավարության հետ: Քանի որ ընկերության տեխնոլոգիան և ասլանքներն ինքնատիպ են, պետք է ավելի մեծ շնչտ դնել Միջին Արևելքի շուկաներ ներթափանցելու վրա:

- Էլեկտրոն – Թեպետ ընկերությունը փորձել է մշակել տարբեր արտադրատեսակներ, առ այսօր չի հասել որևէ նշանակալի արդյունքի: 1998թ. աշնանը կատարված ճեպագնման արդյունքները ցույց տվեցին, որ զարգացման վերոնշված ձախողման հիմնական պատճառը՝ դա տրամաբանական շուկայավարման պակասն է: Սակայն, 1999թ. մարտի արագ դիագնոստիկական ստուգաթյունման ժամանակ ընկերության գործադիր տնօրենը

հայտնեց հետազոտական քիմի անդամներին, որ ընկերությունը որոշել է կենտրոնանալ միմի տրակտորների վրա, այլ ոչ թե, ինչպես նախկինում, գրավել բազմապիսի սալրանքների արտադրությամբ: Նա շեշտեց, որ «Էլեկտրոն»-ի որևէ սրբար կամ սալաոր չունենալու համգամանքը մեծ առավելություն է սալիս մրցակիցների նկատմամբ: Ընկերությունն իրական գործարք ունի չինական գործընկերների հետ, որով ենթադրվում է ներմուծել բաղադրամասերի մի նախնական խմբորամակ և հավայել դրամբ «Էլեկտրոն»-ի գործարանում:

(5) Բիզնեսի բնագավառը և նպատակային շուկան

1) Բիզնեսի բնագավառը

Ներկայումս Հայաստանում չկա գերազանց մեքենաչինական տեխնոլոգիա, թեպետև մեքենաչինությունն այստեղ ժամանակին հիսմալի արդյունքներ է գրանցել՝ արտադրելով այնպիսի բազմազան սալրանքներ, ինչպիսիք են հասարցները, ավտոմեքենաների հետ առնչվող մեքենաները, քիմիական սարքավորումը, գյուղատնտեսական սարքավորումը, հատուկ մշակող մեքենաները և այլն:

Սալրանքների բազմապիսության պատճառով շատ դժվար է հատկորոշել այս ենթահատվածի բիզնեսի տիպական բնագավառը: Այնուհանդերձ, անցյալի փաստերը վկայում են, որ մեքենաչինությունն այստեղ ունի սալագա գարգացման հեռանկարներ: Ընդ որում, մեքենամշակման տեխնոլոգիան արժատական նշանակություն ունի բոլոր ճյուղերի համար: Սա նշանակում է, որ եթե ձեռնարկություններն ունեն շատ լավ մեքենամշակման տեխնոլոգիա, սպա կարող են գարգացնել ցանկացած ճյուղին բնորոշ գործունություն: Ուստի, նրանց բիզնեսի բնագավառը կարող է ընդլայնվել: Մյուս կողմից, ձեռնարկությունների կառավարիչները դժվարանում են որոշել/ընտրել իրենց բիզնեսի նպատակային բնագավառը: Փաստորեն, շատ ձեռնարկություններ դեռ չեն կողմնորոշվել այս հարցում: Կարևոր է, որպեսզի կառավարիչները գտնեն՝ բացահայտեն իրենց ընկերության ուժեղ կողմերը և գործի դնեն բիզնեսի այն ոլորտում, որտեղ դրանք կարող են առավելագույն օգուտը բերել, այլ ոչ թե շեղվեն տարբեր անհիմն այլընտրանքների կողմը:

2) Նպատակային շուկաները

Որպես մեքենաչինական արդյունաբերության նպատակային շուկա, ձեռնարկությունը կարող է գործ ունենալ գանազան ներքին ճյուղերի կարիքների հետ, ընդ որում հենվելով ենթահատվածի վերը բննարկված գլխավոր բնորագրերի վրա: Ներքին շուկայում գործարար հնարավորություններ փնտրելիս անհրամեշտ է չսահմանափակվել միայն վերամշակման ճյուղով, բայց նաև շրջվել գյուղատնտեսության, չինարարության, տրանսպորտի և առևտրի կողմը:

Կարևոր է շարունակել և բնդայնել սրտատհանումն ԱԳՀ և հարևան երկրներ, որտեղ Հայաստանը հանդիսանում է էփմնական դերակատարներից մեկը արդյունաբերական սարքանքների իրացման սապարեգում:

Միայն ձեռնարկության բիզնեսի եռանդուն ու անխոնջ փարունը կարող է տանել աեխնոլոգիայի առաջավոր մակարդակի, ինչն էականորեն կնպաստի ձեռնարկությունների շուկայավարման ջանքերի հաջողությանը:

3.2.3. Բիմիական (դեղագործական) արդյունաբերություն

(1) Այցելած ձեռնարկությունների վիճակը

1) Որպեսզի հասկանանք Հայաստանի բիմիական (դեղագործական) արդյունաբերության ընթացիկ վիճակը, մենք իրականացրեցինք սույուսակ 3.2.3.1-ում բերված ձեռնարկությունների ճեպագնում համաձայն 3.1.1-ում նկարագրված գնահատման եղանակի և ընթացակարգի:

Մենք այցելեցինք մաս բիմիական և բիոտեխնոլոգիական ինստիտուտներ, որոնք չեն հանդիսանում մոդելային ձեռնարկության բեկնածու (տե՛ս (3)):

Ի լրումն վերոնշյալ ձեռնարկություններ այցելությունների, մենք եղանք մաս աղյուսակ 3.2.3.2-ում բվարկված հարակից ձեռնարկություններում, որպեսզի ուսումնասիրենք Հայաստանի բիմիական/դեղագործական հատվածը որպես մի ամբողջություն:

Ի արդյունք նշված ձեռնարկությունների ճեպագնման, մենք հանգեցինք այն եզրակացությանը, որ բիմիական/դեղագործական ենրահատվածում չկա մոդելային ձեռնարկության համար սահմանված չափանիչներին համապատասխանող որևէ ձեռնարկություն: Հնարավոր մոդելային ձեռնարկությանը Փ/Ա ցուցաբերելու փոխարեն, մենք առաջարկում ենք ձևավորել «Դեղագործական ամինոթթունների գծով գործողությունների ծրագիր» (ներառյալ մասնակից կողմերը) (Տե՛ս 3.3.3. (3)):

**Աղյուսակ 3.2.3.1 Քիմիական (դեղագործական) արդյունաբերության
ճեպազննված ձեռնարկությունների ցանկը**

| | Անվանումը | Վայրը | Բիզնեսի բնագավառը |
|-------------------------|--------------------------------------|------------|--|
| Քիմիական. | | | |
| 1 | Նաիրիտ | Երևան | Քլորապրենային կաուչուկ, կաուստիկ սոդա: Ներկայացուցչական ձեռն-ն Հայաստանում: Մանրամասները աես 3.3.3. (2) ա)-ում: |
| 2 | Ղողագործ | Երևան | Անվաղողեր գյուղատնտ. և անձն. օգտագործ. փոխադրամիջ. համար: Ցածր մրցունակուր. (ոչ ճառագ. դողեր): Փորձում և վերսկսել գործուն-ը՝ իրան. մի ֆիրմայի մասնակցուր. |
| 3 | Պոլիվինիլացետատ | Երևան | Արտ. էր պոլիվինիլացետատ: Արտադ-րյան բարձր ծախքի սլաոճսոով ներկայումս փոխարկում է բիզնեսը նավթափերամշակման և պարարտանյութերի արտադրուրյան: |
| 4 | Վանաձորի քիմիական գործարան | Վանաձոր | Կալցիումի կարբիդ, արհեստական սսուլֆիդ: Արտադրուրյան մակարդակը՝ 5 %-ից ցածր: |
| 5 | Քիմ. մանրաթելերի գ-ն | Վանաձոր | Ացետատ. մանվածք: Չի գործում: |
| 6 | Քիմոնեակտիվ | Երևան | Քիմ. հակազղակ: Չի գործում: Պլան կա մի մասի բազայի վրա ստեղծել շարքի վերս- մշակման գործարան: |
| Ղեղագործություն. | | | |
| 7 | Երևանի քիմիական ղեղագործակ. ֆիրմա | Երևան | Ամպուլա: Նորմալ գործաուրյուն: Հին սարքավորում, անհամապատասխ. GMP-ին: |
| 8 | ԵրեՖարմ(*1) | Երևան | Երևանի Քիմղեղագործական ֆիրմայի կառավարող ընկերուրյունը: |
| 9 | Լիզին | Չարենցավան | Բյուրեղ, կերային լիզին: Չի գործում: |
| 10 | Վիտամին | Երևան | Օրգանական սինթեզով վիտամինների արտա- դրուրյուն: Հզոր-ների օգու-մը՝ 5%-ից ցածր |

Աղյուսակ 3.2.3.2 Չննված լրացուցիչ ձեռնարկությունների ցանկը

| | Անվանումը | Վայրը | Բիզնեսի բնագավառը |
|---------------------------|----------------|---------|---|
| Ղեղագործություն. | | | |
| 1 | Լիքվոր ֆարմասի | Երևան | Ներերակային լուծույթի արտ-ն: Տե՛ս (2) 2) |
| 2 | Ֆարմա-Տելս | Երևան | Ներերակային լուծույթի արտ-ն: Տե՛ս (2) 2) |
| Մեծնդի վերամշակում | | | |
| 3 | Աշտարակ-ՎԱԹ | Աշտարակ | Կաթնամթերքի արտ-րյուն: Գործում է ակտիվ՝ կիրառելով օգտագործված սարքավորում: |

2) Դեկլարացիան միջոցով ի հայտ են բերվել Հայաստանի քիմիական, այդ թվում՝ դեղագործական արդյունաբերությանը բնորոշ բնդիամուր խնդիրները: Վերջիններիս և դրանք սլայմամպորոզ գործոնների վերլուծությունը կատարվել է հետևյալ կերպ:

ա) ՆԽՄ-ի տնտեսական համակարգի հետ խոր ինտեգրացում

Քիմիական արդյունաբերությունը, ներառյալ դեղագործությունը, Հայաստանի հիմնական ճյուղերից մեկն էր: Կային բազմաթիվ քիմիական գործարաններ: Դրանք կառուցվել էին ըստ ՆԽՄ-ում աշխատանքի բաժանման և նյութերի ձեռքբերման ու սպարանքների իրացման առումով ապափնում էին նախկին Խորհրդային Միության մյուս հանրապետություններին: Անկախացումից հետո նրանք կորցրեցին և՛ նյութերը, և՛ շուկան:

բ) Մեծ չափեր

Ձեռնարկությունների մեծը մասը ստեղծվել էր ողջ Խորհրդային Միությանը որոշակի սպրանքներ մատակարարելու նպատակով: Չափերը շատ մեծ են՝ համեմատած Հայաստանի տնտեսության հետ: Հետևաբար, սպահանջարկը ներքին և հարևան երկրների շուկաներում բավարար չէ, որպեսզի ապահովի արտադրության բնականոն մակարդակ: Նրանք խիստ չափով կախված են արտահանումից:

գ) Գործառության ցածր մակարդակ

Ի հետևանք Խորհրդային Միության փլուզման և հաջորդած տնտեսական խառնաշփոթի, այս ձեռնարկությունները հիմա կան փակված են, կան էլ աշխատում են ցածր հզորությամբ: Քանի որ ձեռնարկությունների մեծամասնությունը ծայրաստիճան խոշորածավալ է, ուստի այդ ձեռնարկությունների հզորությունների օգտագործումը, մեկ բացառությամբ, գտնվում է 10 %-ից էլ ցածր մակարդակի վրա:

դ) Միջոցների պակաս

Չգործելու և կամ էլ քերի գործելու արդյունքում ձեռնարկությունները հայտնվել են վատ ֆինանսական սլայմաններում: Դրանց մեծ մասը խոշոր պարտքեր ունի (զլխավորապես՝ չվճարված հարկեր և աշխատավարձ): Ձեռնարկությունների մեծ մասը նույնիսկ միջոցներ չունի գնելու հումք և նյութեր, ինչպես նաև նորացնելու սարքավորումները:

3) Քիմիական և բիոտեխնոլոգիական ինստիտուտների առնչությամբ

ՆԽՄ-ի ժամանակ Հայաստանում առկա էին բազմաթիվ քիմիական և բիոտեխնոլոգիական ինստիտուտներ: Այս ինստիտուտների մեծ մասը գործում էր, օգտագործելով Խորհրդային Միության բյուջեի միջոցները, և կոչված էր բավարարել ողջ ՆԽՄ-ի քիմիական արդյունաբերության կարիքները: Հետևաբար, դրանց որոշ մասն այնքան էլ կապ չունի Հայաստանի քիմիական արդյունաբերության հետ:

Այս ինստիտուտների կողմից կատարվող հետազոտությունների մակարդակը շատ բարձր էր (ԽՍՀՄ-ում երկրորդը՝ Ռուսաստանից հետո):

Ներկայումս դրանց մեծ մասն լատ էությամբ դադարեցրել է գործունեությունը, որովհետև չկա անհրաժեշտ ֆինանսավորում: Գիտական աշխատողների մեծ մասի վարձատրությունը ցածր է (միջին ամսականը՝ 20-30 ԱՄՆ դոլար), որոշ փայլուն գիտնականներ հեռացել են արտասահման:

Աղ. 3.2.3.3 Գիտությունների ազգային ակադեմիայի ինստիտուտները

| Ինստիտուտի անվանումը | Հետազոտման ոլորտը | Այց |
|---------------------------------------|---|-----|
| Քիմիական. | | |
| Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտ | Գեղեր | ○ |
| Ընդհ. և ոչ օրգանակ. քիմիայի ինստիտուտ | Ցեմենտ | |
| Օրգանական քիմիայի ինստիտուտ | Օրգան. քիմիական սինթեզ, սերտ կապ <i>Նաիրիտի</i> հետ | |
| Բիոքիմիայի ինստիտուտ | Բրիան և այլ բիոքիմ. նյութ | ○ |
| Քիմիական ֆիզիկայի ինստիտուտ | Քիմիական ֆիզիկա | |
| Բիոսեյսմոլոգիա | | |
| Միկրոբիոլոգիայի ինստիտուտ | Միկրոբիոլոգիա | ○ |
| Մոլեկուլյար բիոլոգիայի ինստիտուտ | Մոլեկուլյար | |

Աղ. 3.2.3.4 Չնված ինստիտուտների գիտաշխատողների թիվը և բյուջեն

| Ինստիտուտի անվանումը | Գիտաշխատողների թիվը | Տարվա բյուջեն (ԱՄՆ դոլար) |
|--------------------------------|---------------------|---------------------------|
| Օրգանական քիմիայի ինստիտուտ | 140-150 | մոտ 80000 |
| Բիոքիմիայի ինստիտուտ | մոտ 80 | 50000 - 60000 |
| Միկրոբիոլոգիայի ինստիտուտ | մոտ 50 | 80000 - 90000 |
| Բիոսեյսմոլոգիայի ինստիտուտ (*) | 80-90 | 60000 - 70000 |

* Այս ինստիտուտը նախկինում կոչվում էր “Ամֆոթրոնների ինստիտուտ” և սերտ կապ ուներ “Լիզին” գործարանի ստեղծման հետ: Գտնվում է Արդյունաբերության և առևտրի նախարարության վերահսկողության ներքո:

(2) Ընդհանուր խնդիրները

1) Քիմիական արդյունաբերություն

Քիմիական արդյունաբերությանը վերաբերող ընդհանուր խնդիրները հետևյալն են:

ա) Կախումը ներմուծովի հումքից

Ձեռնարկությունների մեծ մասը գրադված է օրգանական քիմիական սինթեզով: Քանի որ հումքը՝ հում նավթն ու բնական գազն առկա չեն Հայաստանում, ուստի դրանք հարկ է ներմուծել, անկախ այն բանից՝ ձեռնարկություններն օգտագործում են հում նավթ, բնական գազ քե՞ դրա կիսաֆաբրիկատը՝ բուրադիներ:

բ) Ձեռնարկությունների թույլ փոխկապվածությունը

Թեպետ Հայաստանում տեղակայված են բազմաթիվ քիմիական գործարաններ, դրանք այնքան էլ կապված չեն միմյանց: Նրանք չեն կարող գործել որպես մի միասնական

քիմիական համալիր: Օրինակ, հայկական քիմիական գործարանի ապրանքները որպես կիսաֆարրիկատ առարվում են ՆևՄ-ի որևէ քիմիական գործարանի, մինչդեռ մեկ այլ հայկական քիմգործարան որպես հումք է օգտագործում ՆևՄ-ի ուրիշ քիմիական գործարանի արտադրած այլ նույն ապրանքները:

զ) Բնապահպանության հետ կապված հնարավոր խնդիրները

Ճնշազանցման ենթարկված ձեռնարկություններից չորս խոշոր քիմիական գործարաններ գտնվում են Երևան քաղաքում: Գրանցից երեքը, չհաշված դողեր արտադրող «Գողագործ»-ին, մորմալ արտադրության դեպքում մեծ վտանգ կներկայացնեն շրջակա միջավայրի համար, չնայած ներկայումս, երբ արտադրության մակարդակը ծայրահեղ ցածր է, լուրջ հիմնահարցեր չեն առաջանում: 1989թ. «Նաիրիտ»-ը դադարեցրել է իր գործունեությունը, կապված բնապահպանության խնդիրների հետ:

դ) Սեփականաշնորհման առաջընթացը

Ինչ վերաբերում է քիմիական ենթահաստվածի ձեռնարկությունների մեծամասնությանը (ճնշազանցման ենթարկված վեց ձեռնարկություններից հինգը), բաժնետոմսերի մեծ մասը դեռևս պետական սեփականություն է: Քիմիական ձեռնարկությունները մեծավ մասամբ վաճառվում են միջազգային մրցույթով, այլ ոչ թե սեփականաշնորհման սովորական կարգով, քանի որ դրանք խոշորածավալ են և երկրի համար կարևոր են համարվում: Այդ ձեռնարկությունների ֆինանսական վիճակն այնքան վատ է, որ ոչ մի գնորդ երևան չի գալիս՝ լինի դա միջազգային մրցույթ թե սովորական սեփականաշնորհում: Սակայն, ոռոտական մի ձեռնարկություն պայմանական համաձայնություն է հայտնել զնելու երկու քիմիական ձեռնարկություն (ջերմալվեկարոկայանով հանդերձ), որոնք տեղակայված են Վանաձորում (այս դեպքում ձեռք են առնվել հատուկ միջոցառումներ, այն է՝ այդ երկու ձեռնարկությունների չմարած հարկային սրարտավորություններից ազատում):

ե) Էլեկտրականության սակագնի բարձրացման ազդեցությունը

Քիմիական ձեռնարկությունների մեծ մասի գործունեությունը խիստ էներգատար է: Ի հավելումն, դրանց գործարանները չեն նախագծվել այնպես, որ ուղղված լինեն էլեկտրականության խնայմանը, քանի որ ՆևՄ-ում էլեկտրականության գինը ծայրահեղ ցածր էր: 1999-ից էլեկտրականության սակագինը շեշտակի բարձրացել է: Դա կրերի քիմիական ձեռնարկությունների մեծ մասի արտադրության ծախսերի ավելացմանը և, հետևաբար, դժվար կկարճնի դրանց վերագործարկումը կամ արտադրության ընդլայնումը:

2) Դեղագործական արդյունաբերություն

Դեղագործական ձեռնարկությունները փոքրածավալ են, և սեփականաշնորհումն այստեղ ավելի առաջ է ընթացել, քան քիմիական արդյունաբերությունում: Ձեռնարկությունների տեխնոլոգիան հնացած է, ուստի ապրանքների որակային և ծախսային մրցունակությունը բարձր չի: Օրինակ, «Վիտամին»-ը արտադրում է զանազան

վիստմիններ՝ օգտագործելով «օրգանական սինթեզի եղանակը», իսկ նման եղանակով հնարավոր չի մրցակցել զարգացած երկրների ձեռնարկությունների հետ: Այն պետք է արտադրության իր մերոլն ամբողջապես փոխարկի «գլո եղանակի»:

Հայաստանի այս ճյուղում ստավել ակտիվ են այն ձեռնարկությունները, որոնք կատարում են դեղագործական արտադրության վերջնական գործընթացը (Հշայցում, փաթեթավորում են), հատկապես՝ ներերակային բուժույթի պատրաստում: Պատճառն այն է, որ, հաշվի առնելով էժան աշխատուժը, արտադրամասին ավելի սրակաս է ստացվում, երբ ներմուծվում են դեղանյութեր և սալս տեղում փաթեթավորվում կամ Հշայցվում, քան թե՛ երբ դեղերն են ներմուծվում Հայաստան կամ ՆԽՄ այլ երկրներ: Նրանք ամբողջապես ապավինում են դեղային հումքին, ուստի և ավելացված արժեքը շատ փոքր է:

Ի յրոմն, արտադրման պատշաճ կարգը (GMP) ընդունված չի եղել ՆԽՄ-ի օրոք: Այդ ժամանակներում ստեղծված դեղագործական ձեռնարկությունները նախագծված չեն եղել համաձայն GMP-ի: Ուտ 1998թ. գործողության մեջ մտած «Գեդեթի մասին» նոր օրենքի, որը ներ է ստել GMP-ի հայեցակարգը, այն դեղագործական ձեռնարկությունները, որոնք չեն հետևի GMP-ին, կգրկվեն արտադրության արտոնագրից:

Ստորև բերվում է Հայաստանում դեղագործական ապրանքներ քույրկող երեք ձեռնարկություններում որակի վերահսկողության վիճակի և GMP-ի հետ նրանց հարաբերակցության ամփոփագիրը:

ա) Ֆարմա-Տեխ

Ներդրվել է 13 մլն ԱՄՆ դոլարի արդիական սարքավորում: Գործարանի նախագիծն ու գործառությունը համապատասխանում է GMP-ի հայեցակարգին: Այն նպատակ ունի ձեռք բերել GMP-ի հավաստագիր: Նաև միտված է ISO9000 ստանդալ 1999թ: Իրականացվում է որակի բարձր մակարդակի վերահսկողություն:

բ) Լիքվոր Ֆարմասի

Վարձակալում է հիվանդանոցի մի մասը և կիրառում հիմնականում օգտագործված սարքավորում: GMP-ի հայեցակարգը ներ է դրվել արտադրության մեջ և նպատակ կա ձեռք բերել GMP-ի հավաստագիր:

գ) Երևանի դեղագործական ֆիրմա

ՆԽՄ-ի օրոք կառուցված այս գործարանը դեռ շարունակում է գործել: Անհրաժեշտ է այն լիովին վերանախագծել ու վերակառուցել, որպեսզի համապատասխանության բերվի GMP-ի պահանջների հետ:

Երկու ձեռնարկությունները, որ գործում են համաձայն GMP-ի, իրենց ապրանքները ներկայումս վաճառում են Հայաստանում և ԱՊՀ երկրներում: GMP-ի հավաստագրեր ձեռք բերելուց հետո դրանք երկուսն էլ պլանավորում են արտահանել Լվիտայական երկրներ:

Ծանոթագրություն - Արտադրման պատշաճ կարգը (GMP)

Դեղագործական ասլանքների արտադրության ստանդարտներ, որոնք նախանշում են ողջ արտադրության գործընթացում վերահսկողության իրականացումը՝ սկսած հումքի ստացումից և վերջացրած սրատրաստի ասլանքների առաքմամբ: Դրանք նաև սահմանում են շենքի, մեքենաների ու սարքավորման սեղակայումը, որպեսզի ասլանքներն արտադրվեն համաձայն հաստատված չափանիշների: 1968թ. ՎԻՕ-ն (ԱՄՆ-ը) որոշում կայացրեց GMP-ի անհրաժեշտության մասին՝ որպես մի հիմնարար սկզբունքի, որ կոչված է երաշխավորել դեղագործական ասլանքների անվտանգությունն ու արդյունավետությունը, և հաջորդ սուրի համապատասխան առաջարկություններ արվեցին անդամ երկրներին: GMP-ն ընդհանրապես պահանջում է մարդկային սխալների հսկում, դեղերի աղտոտման և որակի ու նախագծի փոփոխության կանխում՝ երաշխավորելով որակի բարձր մակարդակ: Այն կոնկրետ կարգավորում է վերջնական դեղամիջոցների բնութագրերն ու արտադրությունը, սահմանում է շենքերի, մեքենաների, աշխատողների, հումքի, արտադրության ու վերահսկման, խմբային արտադրման ու վերահսկման չափանիշները, կոնտեյներներն ու նյութերը, փաթեթավորումն ու ներկայացումը, որակի փորձարկման վերահսկողությունը, առաքման գրանցումը, կայունությունը, ուժի մեջ լինելու ժամկետի սահմանումը, գանգառների հետ վարվելու կարգը և այլն:

3.3. Ձարգացման ուղղությունը և հեռանկարային ապրանքները

3.3.1. Էլեկտրատեխնիկական և էլեկտրոնիկայի արդյունաբերություն

(1) Ձարգացման ուղղությունը

Գոյություն ունեն մի շարք նախապայմաններ, որոնք պետք է ի նկատի առնել, երբ փորձում ենք ձեռք բերված սահմանափակ տվյալների և տեղեկությունների շրջանակներում ուրվագծել Հայաստանում էլեկտրատեխնիկական/էլեկտրոնիկայի արդյունաբերության ուղղությունը: Դյուղը գտնվում է ծայրահեղ ծանր իրավիճակում, երբ ձեռնարկությունների մեծ մասն անգործության է մատնված կամ էլ գոյծում է արտադրական հզորությունների 10%-ից էլ ցածր մակարդակով, ընդ որում չունենալով ապագա գործունեության որևէ հստակ մտապատկեր: Հետևաբար, հույժ կարևոր է գործնական մոտեցման հիման վրա տեսագրել զարգացման ուղղությունը և, գնահատելով եղած հնարավորությունները, ձևավորել համապատասխան կարճաժամկետ և միջնա-/երկարաժամկետ ծրագրեր:

Հաջողության հասնելու համար կարևոր նշանակություն ունի նաև կենսագործելիության գործոնի հաշվառումը: Հարկ է մանրազննին քննության առնել հետևյալ պայմանները.

- տվյալ ապրանքի արտադրության փորձը և արտադրագծի ընթացիկ վիճակը.
- հումքի առկայությունը, այդ թվում՝ ներմուծման հնարավորությունը.
- ապրանքի տրանսպորտային փոխադրման/բեռնատարման դժվարությունը.
- ձեռնհաս մարդկային ռեսուրսների ապահովումը:

Ցանկալի է, որպեսզի զարգացման առաջարկվող ծրագիրը նշանակալի դրական ներգործություն ունենա Հայաստանի տնտեսության վրա: Այս տեսակետից անհրաժեշտ է ստուգազննել տվյալ ապրանքին վերաբերող հետևյալ կողմերը.

- ներքին շուկայի ծավալը կամ արտահանման ներուժը.
- ապագա աճի ներուժը:

Ստորև բերվում են հետազոտական թիմի դիտարկումները զարգացման ուղղության վերաբերյալ, ելնելով վերոշարադրյալ նախապայմաններից ու տեսակետներից.

- ա) կարճաժամկետ նշանակետի ապրանքները, հիմք ընդունելով ձեռք բերված արտադրական փորձառությունը.
- շուկաների առկայությունը հարևան երկրներում և Հայաստանում, եղած սարքավորումներով արտադրելու հնարավորությունը.

- արտադրական համակարգը կարող է կիրառվել՝ փոքր-ինչ բարելավելով արտադրական փորձառությունը, նյութերի ձեռքբերումը, աշխատողներով ապահովվածությունը, սարքավորումն ու հարմարանքները և այլն.

բ) միջնա-/երկարաժամկետ տեսանկյունից հետազոտման ենթակա նախագծերը.

- աճի մեծ ներուժի առկայությունը.
- օտարերկրյա ֆիրմայի/ֆիրմաների հետ համատեղ ծրագրով՝ բարձր տեխնոլոգիական բիզնեսի նախաձեռնումը.
- ԳՀԻ-ների / համալսարանների հետազոտական արդյունքների իրացումը՝ որպես նոր բիզնես կամ ապրանքներ:

(2) Հեռանկարային ապրանքները

1) Կարճաժամկետ նշանակետի ապրանքները, հիմք ընդունելով ձեռք բերված արտադրական փորձառությունը

ա) Տպահարթակներ (PCB)

